ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԱԿԱՆ—ՎԱՐԶԱԿԱՆ ՑԱՋՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ.

Թիֆլիզի Թանդոյեան երկդասեան օրիորդաց ուսումնարանի հոգաբարձութիւնը դիմել է Վեհափառ Հայրապետին առանձին յայտարարութեամբ, հայցելով Նորին Ս. Օծութիւնից բացատրութիւն ծխական—եկեղեցական ուսումնարանների կանոնադրութեան մի քանի յօդուածների մասին:

Նորին Վեհափառութեան Բարձր հրամանով ուսումնարանական յանձնաժողովս ներքոյ նշանակեալ բացատրութիւնները հրատարակում է «Արարատի» միջոցով ի գիտութիւն և ի հրահանգութիւն մեր բոլոր ծխական — եկեղեցական ուսումնարանների հոգաբարձութեանց:

1. Ա. յօդ. 3.

Միդասեան ուսումնարանը բաղկացած է երեք բաժանմունքից, իսկ երկդասեանը՝ հինգ: Հոգաբարձուներից ոմանք երկդասեան դպրոցի առաջին երեք բաժանմունքները պատրաստական են անուանում, իսկ չորրորդ բաժանմունքը՝ առաջին դասատուն և հինգերորդը՝ երկրորդ դասատուն: Այսպէս հասկանալով երրորդ բաժանմունքից չորրորդ փոխադրուողներին, եթէ նոքա չեն ցանկանում այլ ևս շարունակել իւրեանց ուսումը, միդասեան ուսումնարանի աւարտման վկայական չեն տալիս, ասելով թէ՝ չորրորդ բաժանմունքը առաջին դասարան լինելով, հինգերորդ բաժանմունք փոխադրուողները միայն իրաւունք ունին այդպիսի վկայական ստանալ:

Այս հայեացքը սխալ է: Մեր ծխական—եկեղեցական ուսումնարանի առաջին, երկրորդ և երրորդ բաժանմունքները կազմում են առաջին դասատուն, իսկ չորրորդ և հինգերորդ բաժանմունքները՝ երկրորդ դասատուն: Հետևաբար Գ. բաժանմունքից աւարտողներին կամ չորրորդ բաժանմունք փոխադրուողներին հոգաբարձութիւնն պարտաւոր է տալ միդասեան ուսումնարանի աւարտման վկայական, եթէ այնուհետև աշակերտը կամ աշակերտուհին կթողնէ ուսումնարանը: Իսկ հինգերորդ բաժանմունքից աւարտողներին պարտաւոր է տալ երկդասեան ուսումնարանի աւարտման վկայական:

2. Առ. յոտ. 19.

Աւագ ուսուցչի և ուսուցչաց (նոյնը և ուսուցչուհեաց) ընտրութեան ժամանակամիջոցը և հոգաբարձուաց իրաւասութեան խնդիրը այդ գործում ոչ պակաս տարաձայնութեանց առարկայ է եղած:

Առ այս եղած կանոններով սահմանուածը հետևեալն է. բոլոր ուսուցիչները թէև ընտրվում են անորոշ ժամանակով, բայց ցանկալի է, որ նոքա ստէպ ստէպ չփոխուին: Աւագ ուսուցչի ընտրութեանը հոգաբարձութիւնք միանգամայն մասնակցելու իրաւունք չունին: Իսկ միւս ուսուցիչներին ընտրում է աւագը խորհրդակցութեամբ հոգաբարձուաց հետ: Բայց եթէ հոգաբարձութիւնը չհաւանի աւագ ուսուցչի ընտրած ուսուցիչներին, կարող է դիմել բողոքով Ս. Առաջնորդին և սպասելու է նորա տնօրինութեանը: Նոյնպէս եթէ մի տարաձայնութիւն լինի հոգաբարձութեանց և աւագ ուսուցչի մէջ, դիմելու է Ս. Առաջնորդին և ոչ թէ ինքը իրաւասութեամբ վճռելու է նոցա արձակումը:

3. Առ. յոտ. 30.

Ուսուցիչները իւրեանց ուսումնարանի համար հոգաբարձուաց ընտրութեան միջոցին ոչ ընտրող և ոչ ընտրելի կարող են լինելուստի և ոչ մի դէպքում հոգաբարձուն նոյն ուսումնարանում ուսուցիչ լինել չի կարող:

4. Առ. յոտ. 33 և 39.

Այս յօդուածները այսուհետև այլ ևս գործադրելի չեն, քանի որ Վ.Հ. Հայրապետի հրամանով հրատարակուած կոպարներով պէտք է առաջնորդուել: Ամեն մի փոփոխութիւն Նորին Սրբութեան թոյլտուութեամբ պէտք է լինի: Հոգաբարձուաց կմնայ ընտրութիւն անել կոպարների այլ և այլ ձևերի մէջ և այն՝ գիտութեամբ Ս. Առաջնորդի:

5. Առ. յոտ. 38.

Եկեղեցական այն կալուածները, որոնց արդիւնքը յատկացրած է ուսումնարանին, հոգաբարձութիւնն է կառավարում ըստ իւր նպատողութեան, ուսումնարանի օգուտը ի նկատի առնելով, բայց ոչ մի հոգաբարձու ոչ ձրի և ոչ նոյն իսկ վարձով կարող է իւր համար գործ դնել կալուածքը, Իսկ եթէ եկեղեցական կալուածքը չէ յատ-

կացրած ուսումնարանին, Հոգաբարձութիւնը իրաւունք չունի այն կալուածքի վերայ, որի մասին պատասխանատուն եկեղեցւոյ երեցփոխանն է։

6. Առ. յօդ. 47.

Աւագ ուսուցչին Հոգաբարձութիւնը ամեն անգամ կարող է Հրաւիրել Հոգաբարձական ժողովի նստին, ուր ամեն մի Հոգաբարձու լիակատար իրաւունք ունի բացատրութիւններ՝ թէ բանաւոր և թէ գրաւոր, պահանջելու նորանից ուսումնական այլ և այլ խնդիրների մասին։ Հոգաբարձական ժողովի վճիռները պարտաւորական են աւագ ուսուցչի համար, եթէ Հոգաբարձութիւնը կանոնադրութեամբ իւր համար գծագրած սահմանից չդուրս գայ։. Տարաձայնութիւնները լուծողը Ս. Առաջնորդն է։

7. Խո. յօդ. 52.

Այս յօդուածի զօրութեամբ Հոգաբարձութեան նախագահը ստանում է ուսումնարան նոր մտնել ցանկացողների խնդիրները և ծննդեան վկայականները։ Նախագահի պարտաւորութիւնն է այդ բոլորը յանձնել Հոգաբարձութեան ժողովին, որից և աւագ ուսուցիչը կստանայ ի գործադրութիւն։ Ուրեմն պատասխանատուութիւնը ոչ միայն նախագահի վերայ է, այլ ամբողջ Հոգաբարձութեան։

8. Առ. յօդս 61.

Հարցաքննութեանց ժամանակ Հոգաբարձուն իրաւունք ունի հարցեր առաջարկելու ընդ ձեռն աւագ ուսուցչի և իւր նկատողութիւնները Հոգաբարձական ժողովում քննելուց յետոյ, եթէ ժողովը կարևոր համարէ, կարող է ներկայացնել Ս. Առաջնորդին։

9. Առ. յօդ. 62.

Հարցաքննութեան եղանակի մասին առանձին կարգադրութիւն կլինի իւր ժամանակին. ուստի առ այժմ ամեն մի ուսումնարան իւր տեղական սովորութեամբ կարող է կատարել Հարցաքննութիւնները։

---

10. Հոգաբարձութիւնը հարցնում է, թէ երգեցողութեան ու-

սուցիչը կարող է գեղագրութիւն կամ գծագրութիւն դաս տալ և կամ վերակացու լինել:

Երգեցողութեան ուսուցիչը եթէ է. կարգի է, միայն երգեցողութիւն դաս տալու իրաւունք ունի: Կարող է լինել և վերակացու:

—

11. Հոգաբարձութիւնը հարցնում է, թէ հոգաբարձութիւնք կարող են մանակցել մանկավարժական ժողովներին և կամ կազմել խառն ժողովներ:

Մանկավարժական ժողովներում հոգաբարձուաց մանակցութիւնը միանգամայն աւելորդ է. իսկ խառն ժողովներ կազմելու համար քանի որ կանոնադրութեան մէջ յօդուած չկայ, այդպիսի ժողովները մասնաւոր նշանակութիւն կունենան:

—

12. Հոգաբարձութիւնը հարցնում է, թէ հոգաբարձութեան նախագահը իրաւունք ունի ինքնագլուխ վարելու ուսումնարանի գործերը:

Հոգաբարձութեան նախագահը և հոգաբարձուք կառավարում են ուսումնարանը խորհրդակցութեամբ. ամեն մի որոշմունք ժողովով պէտք է լինի և արձանագրուելուց և ստորագրուելուց յետոյ, պէտք է յանձնուի նախագահին ի գործադրութիւն:

—

13. Հոգաբարձութիւնը հարցնում է, թէ ի՞նչ պատասխանատուութեան կենթարկուին հոգաբարձուները և ուսուցիչները ի դէպս պարտազանցութեան:

Հոգաբարձուաց և ուսուցչաց պատասխանատուութեան խնդիրը Բարձրագոյն Հոգևոր Իշխանութեանն է վերապահուած, որ և ամեն մի զանցառութեան համար իւր բարենկատողութեան համեմատ կպատժէ յանցաւորներին:

—

14. Հոգաբարձութիւնը հարցնում է, թէ ո՞րպիսի անձինքներ իրաւունք ունին հոգաբարձութեան ընտրութեան համար երեցփոխանեւ ապա հոգաբարձու ընտրուելու:

Հոգաբարձուների ընտրութիւնը Բարձրագոյն Հոգևոր Իշխանութիւնը հաւատացել է ժողովրդին այն ցանկալի յուսով, թէ ժողովուրդը այդ պաշտօնի համար կընտրէ իւր միջից արժանաւորներին, որպէս զի նոքա արժանանան հաստատութեան:

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

Ըստ Բարձու հրամանի Սրբազնագոյն Կաթուղիկոսի ամենայն Հայոց Թոյլատրի ամենայն վարչութեանց եկեղեցական—ծխական օրիորդական ուսումնարանաց մերոց «Հայկական նշանագրեր և ծաղկագրեր ձեռագործի համար» անուանեալ տետրակն՝ յօրինեալն ի Վարդանայ Ստեփանեան Վարդանեանց ի գործ ածել իբրև զօրինակս ձեռագործի:

Պ. Բ. Տէր Մկրտիչեանցը գրում է Պուշչի Բիլակ գիւղից, որ Կոտեվազու վանքում հանդիպել է երկրաչափ պ. Յովհաննէս Իսահակեանցին, որ նկատելով վանքի կիսաւեր կաթուղիկէն, նուիրել է նորա նորոգութեան համար 10 ռուբլի: Այլ ուխտաւորք ևս նորա յորդորանօք հետևել են նորա օրինակին և նուէրներ տուել նոյն նպատակի համար, որով կազմուել է 64 ռ. 40 կոպ. գումար:

ՀԱՄԱՌՕՏ

Հաշիւ ելից և մտից եկեղեցական— ծխական երկսեռ ուսումնարանաց Հայոց Մօզդոկայ, յընթացս $18^{89}/_{90}$ ուսումնական շրջանի.

ՄՈՒՏՔ

	Ռ.	Կ.
Առձեռն դրամ՝ անցեալ $18^{88}/_{89}$ ուսումնական շրջանից մնացած	113	31
Քաղաքի երեք եկեղեցիներից՝ ի պահպանութիւն ուսումնարանաց	2100	
	37	